ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 150-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

Փետրվարի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ "Թումանյանագիտության արդի հիմնախնդիրները" թեմայով համաժողովը՝ նվիրված մեծանուն գրող, Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյանին:

Համաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռաֆիկ Մարտիրոսյանը*: Իր ելույթում նա, մասնավորապես, մեջբերեց Հովհաննես Թումանյանի խոսքերը. "Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերենով և հայ գիտնականների կաճառ՝ գիտության օջախ, հայկական ակադեմիա": Նա երազում էր ունենալ համալսարան մեր կրթության համակարգում: Առաջին Հանրապետության ղեկավարները կարողացան նրա ցանկությունն իրականացնել. 1919 թ. հիմնադրվեց Երևանի պետական համալսարանը, որի 100-ամյակը պետք է այս տարի նշենք, բայց, Գիտությունների ակադեմիան այդ ժամանակ չհաջողվեց կազմակերպել, այն ստեղծվեց ավելի ուշ",– ասաց ԳԱԱ նախագահը:*

Ներկաներին ողջունեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը*: "Պատահական չէ, որ շատ գիտնականներ, հասարակական գործիչներ Թումանյանին համարում են ամենահզորներից մեկը, ով ազգի ձևավորման մեջ շատ մեծ դերակատարում է ունեցել: Երբ կարդում ես նրա հրապարակախոսական նյութերը, կարծես մի քանի օր առաջ է դրանք գրել: Բացի այն, որ գրել է, խնդիրը վերհանել, նաև լուծումներ է առաջարկել",– ասաց նախարարը: Ա. Հարությունյանը, լինելով Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյանի առիթով ստեղծված կառավարական հանձնաժողովի նախագահ, հայտարարեց, որ պետությունը նպատակ ունի Թումանյանի հոբելյանին նվիրված միջոցառումները վերածել համազգային տոնախմբության:*

Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության, գրական-հասարակական գործունեության վերաբերյալ ելույթներով հանդես եկան Հայաստանի - գիտաուսումնական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից վերջին մեկ տարում հրատարակված Հովհաննես Թումանյանի կյանքին ու գործունեությանը նվիրված գիտական աշխատություններ: